ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 33

ՄԱՐՏՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՆՐԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 525.0 ՔՄ ԱՅԳԵԳՈՐԾԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ 85.3 ՔՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Մարտուն Ռաֆայելի Հովհաննիսյանի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել իրեն սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-2 այգետարածք թիվ 17 տեղամաս թիվ 1 հասցեի այգեգործական հողամասում 1991-1995 թվականներին ինքնակամ կառուցված այգետնակը, սան հանգույցը, ջրավազանը, զուգարանն ու պարիսպը և սեփականության իրավունքով իրեն պատկանող 525.0 քմ այգեգործական հողամասին կից ինքնակամ զբաղեցրած 85.3 քմ հողամասի նկատմամբ ճանաչել իր սեփականության իրավունքը: Համայնքի կադաստրային քարտեզի, որակավորված անձի կողմից գծված հողամասի և շինությունների հատակագծերից և տեղում կատարված ուսումնասիրությունից պարզվեց, որ Մարտուն Ռաֆայելի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-2 այգետարածք թիվ 17 տեղամաս թիվ 1 հասցեի այգեգործական հողամասում 1991-1995 թվականներին ինքնակամ կառուցվել է 268.51 քմ մակերեսով այգետնակ, 6.3 քմ մակերեսով սան հանգույց, 16.22 քմ մակերեսով ջրավազան, 3.06 քմ մակերեսով զուգարան և 3.08 քմ մակերեսով պարիսպ և սեփականության իրավունքով իրեն պատկանող 525.0 քմ հողամասին կից ինքնակամ զբաղեցրել է 85.3 քմ մակերեսով հողամաս:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9; 10; 11; 22.1 կետերի պահանջների, հիմք ընդունելով որակավորված անձի կողմից գծված հողամասի և շինությունների հատակագծերը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մարտուն Ռաֆայելի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-2 այգետարածք թիվ 17 տեղամաս թիվ 1 հասցեի այգեգործական հողամասում այգետնակը, սան հանգույցը, ջրավազանը, զուգարանն ու պարիսպը կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, 85.3 քմ տարածքը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում՝ ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Մարտուն Ռաֆայելի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող 268.51 քմ մակերեսով այգետնակը, 6.3 քմ մակերեսով սան հանգույցը, 16.22 քմ մակերեսով ջրավազանը, 3.06 քմ մակերեսով զուգարանը և 3.08 քմ մակերեսով պարիսպը համարել օրինական:
2. Հաշվի առնելով, որ ինքնակամ շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար վճար չի գանձվում:
3. Քաղաքացի Մարտուն Ռաֆայելի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող 525.0 քմ հողամասին կից ավել օգտագործվող 85.3 քմ մակերեսով ինքնակամ
զբաղեցրած հողամասը սեփականության իրավունքով անհատույց տրամադրել Մարտուն Ռաֆայելի Հովհաննիսյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2017 թ. հոկտեմբերի 16
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 69070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 34

ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ, ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերի պահանջների, հիմք ընդունելով «ՕԱԶԻՍ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ ***որոշում եմ.***

1. «ՕԱԶԻՍ ՖՈՒԴ» ՍՊԸ-ին տալ 21-րդ փողոց թիվ 1 հասցեում գտնվող «Բելլաջո» ռեստորան-հյուրանոցում ոգելից և ալկոհոլային խմիչքների, ծխախոտի արտադրանքի իրացման, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն 2017 թվականի 4-րդ եռամսյակի համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2017 թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20
գ.Պտղնի